

զայս գունն գործէր, առնէր, քակէր, կոտորէր, ոտաց կոխանս տայր, եւ զայլս գերեցուցանէր. զգահ սրբոց եկեղեցեց. աւար առնէր, եւ զեկղցիս. քրիստոնէից՝ տաճկաց ջամի առնէր, որ ոչ ոք կարէ թուով արկանել զաւերութի. նր. եւ զանչափ նեղութիս. եւ վիշտս հասուցանէր ի վր. ողորմելի ազգին Ֆռանդաց հաւատացեալ քրիստոնէից. մինչ կամէր զլուսարուի աթոռն առաքելոց, որ է մեծն Հոռոմ, զայն եւս առնուլ, եւ ի սրոց. առջից. Պետրոսի եւ Պողոսի եկեղեցւոյ մէջն ազան տալ: Բայց նախախնամութի. ամենազորին Այ, որ ոչ իսպառ բարկանայ, զի թէպէտ հարկանէ, սակայն եւ բժշկէ. եւ ոչ անտես արար զհաւատացեալքս անուան իւրոյ.//

562ա. եւ գթացեալ զարեամբն իւրով փըրկեալ զնորս իէլ. եւ ետ միարանութի. զօրութի. եւ յաղթութի. թգրցն. քրիստոնէից, որք միարանեալք ի միասին հանդերձ թգրաւն. հիւսիսոյ եւ զօրութբ. սր. խաչին Քի. ամենեքեն. ի զիմի հարան երկրորդին Գողիադու, եւ հալածական արարին զնա զօրօք իւրովք. եւ ազատեալ ի նոցանէ զերկիրն ամ. հանդերձ երկրաւն իլովացւոց. առին եւ զմայրաքղքն. Ընկուղաց զՊուտուժ եւ զայլ քղքս. եւ Ըղկղցիս յուրվս, եւ տիրեցին մինչեւ ցՄակեդոնիա եւ մինչեւ զԱդրիանուպօլիս: Եւ այժմ խնդրեն ի յՕսմանցւոցն զմայրն ամ. քաղաքաց՝ զմեծն Կոստանդնուպօլիս: Իսկ թգրքն. Օսմանցւոց կամին խաղաղութի. արկանել, ուխտ եւ զաչին ի միջի հաստատել: Բայց թգրքն. Ֆռանկացն քրիստոնէից ոչ կամին: Այլ եւ զկատարածն սոցա Այ. է զիտելի, եթէ ուր հասանիցի: Զոր եւ խնդրեմք եւ մեք յամենազոր արարչէն, զի քաղցր ակամբ հայեսցի ի ստեղծուածս իւր եւ բարձրացուցէ զեղջիւր թգրութե. քրիստոնէից, եւ զոր ինչ իւր է կամք. օրհնեալ եղիցի յամ. Ժամ ամէն:

Եւ արդ՝ զի ես Երեմիա քհնյս. զհոգեւոր սիրոյ ծնունդս ըզմամբ սրտիւ հաստատեալ եզի յիշատակ ի սր. մենաստանն Այրէվանից, ի ձորակն Գառնուոյ, զնուէրս ազերսից ածամուխ. Գեղարդեան նշանի, նաեւ հատեալ ձեռամբ հրշոտակի. Այ. ի տապանէ նախահօրն Նոյի, ըստ խնդրոյ հայրապետին Յակոբայ. որոյ անուամբ վանիցն վերակոչուամ լսի. լիցի եւ եղիցի անդ եւ մնայ մատանս ածաղիծ. պատճառ յիշատակի Երեմիա քհնյի. եւ կողակցի Խանաղի, հօրն Զաքարիայի եւ մօրն Շաղոսկուոյ, ձեռնամուծութբ. հոգեւոր հօր մերոյ սրբաանունդ Դաւիթ վրդպտի: Որ էր յայսմ Ժմկի. վերադիտող եւ առաջնորդ սր. ուխտիս. զքաջ բարունին գտէր Դեթ. փոքրն եւ յետոյն. քանզի Դաւիթս այս էր ի մեծ եւ յազատ իշխանաց տոհմէ, ի զաւակէ եւ ի թոռանց մեծին Պոռչի. եւ Դաւիթս եղբորորդի մեծ Դաւիթ եպսին, որ յառաջ քան զայս առաջնորդ էր սր. վանիցս: Բայց էր կարի հեղ, խոնարհ, բարեմիտ եւ բարուքն ողորմած. մինչ ի սա Խ. ամ առաջնորդ լեալ էր եւ ոչ մի ոք ի սմանէ նեղարտեալ. եւ էր այր երեւելի եւ քաջահնար ի գրուեսս արքունեաց արդիւնարար եւ շէն ի տուն. որ եւ ըզմ. աշխատանս կրեց. եւ

յուրով շինուածս արար ամ. կողմանց՝ զեկղցքս. հնացելս. եւ զխախտելս. եւս յօրինուածովք նորոգեց: Սա փոխեալ եղեւ առ Ած, ՌձիԴ. թուին, յաւուր վերափոխման Ածածնին: Եւ յետ նր. նստաւ աթոռ առաջնորդութե. եղբայր նր. Ստեփաննոս վրդպ. Դ. ամ. եւ էր Ստեփաննոս վրդպս. քաջ փիլիսոփայ եւ ածարան. բայց ոչ էր իբրեւ զԴաւիթ շինարար:

Եւ ի յաւուր եպսութե. սորա եղաւ ածասաստ. բարկութի. ի զաւառս Արարատեն, ի թուարեւութե. հայոց՝ ՌձիԸ. յունիս ամսոյ Դ. յաւուր չորեքշաբթի.//

562բ. մինչ ոչ էր հասարակել. օրն, հնչեաց երկիր եւ զզրդեցաւ արարածք զողմանի (!) լեալ երկիր ըլլոր, շարժեաց յօղախառն սաստկագոյն, մինչ զի տեսողաց անյոյս մնացել. ի կենաց կենցաղոյս, զվերջին աւուրս մտածելով, եթէ լրումն երկրի իցէ աւուրս այս. որ եւ թուէր թէ ոչ ինչ գոյր պակաս յայնմանէ: Բայց ի խնամս Այ. դձլ. հաստատեց. ի կայանս իւր ամ. չըջակայ արարածք. վս. զի երկիր մեծարձակ պատուեցաւ, վէմք հատել. ծըւէնս ծըւէնս լեալ թաւալեալ ի ձորակս եւ ի հովիտս լցուեցան: զլուսին եւ զարեակն մթացեալ զիշերացան ի փոռոյ հողոց. ջուրք համօրէն արիւնագունեալ խառնակեցան, աղբերակունք ի սահմանեալ ընթացիցն մոլորեցան, տունք Այ. հաստատաչէնք եւ արքայակազմ եկղցիք. ի հիմնէ տապալեալ քակտեցան, պողոտայք յուրվազնոցք՝ քարակուտս լեալ խափանեցան ի ընթացից մարդկանց. շէնք եւ շինուածք հնոց եւ նորոց ի սպառ կործանեցան ի հիմանց եւ մարդք անթիւք եւ անհամարք ի ներքոյ տան մեռան, եւ ոմանք որք ունէին գտեարս՝ յետ երկուց եւ երկից աւուրց հանէին ի տակէ հողից հանդերձիւք իւրոց. առանց քհնյի. եւ կարգի կատարման ամփոփէին ի հողս, եւ որք ոչ ունէին ոք սրտացաւ եթէ հանէր, զեռկայ յայնմ տեղուջ, ուր հանդուցեալ է: միթէ միւսանդամ նորոգողն Քս. նորոգեցէ յաւուր զալստեան իւրոյ: Ով կարէ պատմել զազէտ եւ զկակիծն, զոր տեսաք աչօք մերովք, զբժիշկն ամենից բժշկեցէ զվիրաւորելուն. ամ. ի յաւադ լեռոն Մասիսէ մինչեւ ի բլուրն Շամիրամայ իսպառ քակեաց եւ մեծ աւերումն եղեւ, բայց ի գլուխ կաթուղիկեաց հանուրց եկեղեցեաց լուսաւորչաչէն բարձրագումբէթն էջմիածին միայն մնաց հանդերձ Գայիանաւ եւ Հոնիսիմէիւն ի պարծանս ազգիս մերոյ: Իսկ զձորակն Այրէվանից առաւել եղեւ աւերումն եւ քակտումն. վս. զի ամ. շինուածք ի մէջ խոր ձորի եւ շուրջ բոլորաւն վէմք անազին, եւ յորժամ շարժեաց շուրջանակի, թաւալեցան ամ. զիմաց եւ լցան վանքն ամ. մինչ զի ոչ երեւիւր նշմարանք շինութե. բայց միայն կուտոցս քարի երեւէր, որք տեսողացն զարհուրեալ զողային. ըւահօք եւ ճանապարհք ամ. խափանեցան եւ թէ կամէին կերակուրս հողեպահս տանիլ, յուսով եւ թիկամբ բարձեալ արսիթերս գնային. վս. զի կարի զժուարացեալ էր եւ ամ. կահիւք պակասնալ, ոչ գոյր տեղի աղօթից եւ ոչ տեղի բնակութեց. մարդկան, բայց քարակառկառ միայն. եւ ոչ մնաց քար ի վր. քարի, ոչ ի յեկեղեցիսն եւ ոչ ի յայլ